ԼՐԱԳՐԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՇՈՒՐՋ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Ն. Մ.

Ծագելով մարդկային հասարակության ձևավորման վաղ աստիճաններում՝ բարոյականությունը, ինչպես հայտնի է, զարգանում է տնտեսական և այլ հարաբերությունների փոփոխման, մարդկանց նյութական և հոգեվոր մշակույթի առաջադիմության ընթացքում: Համամարդկային տարրերի հետ միասին բարոյականության մեջ մտնում են նաև պատմականորեն անցողիկ և մնայուն նորմեր, սկզբունքներ, իդեալներ և այլն:

Բարոյականության ծնունդը երկարատև փոխհարաբերությունների գործընթաց է, որը ծագում է սոցիալական միջավայրում և ձևավորվում անհատների գիտակցության մեջ: Այն վերացարկում է այդ փոխհարաբերությունները լեզվի միջոցով և դրանով նպաստում հասարակական գիտակցության ձևավորմանը:

Բարոյականության էությունն է անհատի կամքը, որը համաձայնեցնում է իր գործողությունները հասարակական շահերին զուգընթաց: Այս կամքը սկզբից ևեթ պայմանավորված է անհատի գոյատևման իրադրության և հասարակության սերտ կապով (հետևաբար, նրանց ապրելակերպի և հետաքրքրությունների շահերով): Այն ելնում է այս շահերի միջին թվաբանականից, որը ամրագրված է հասարակության զարգացման այս կամ այն փուլում՝ որպես արժեքների գնահատական, և կարգավորվում է հասարակության և անհատի հատուկ հարաբերություններով՝ բարոյական հարաբերություններով[1]:

Հասարակական գիտակցության սկզբնավորման առումով բարոյականությունը պատմականորեն առաջին ձևն էր: Այն դարձավ հիմք, որի վրա, անհրաժեշտության դեպքում, մշակվում են նոր հարաբերություններ, հասարակական գիտակցության նոր ձևեր՝ իրենց փոխադարձ կապերով ու առնչություններով: Այս առումով բարոյական հարաբերությունները հասարակության մեջ առանձնահատուկ հարաբերություններ են, որոնք ներթափանցում են հասարակական գիտակցության այլ ձևերի մեջ: Ահա թե ինչու մենք կարող ենք խոսել քաղաքականության, տնտեսության, գաղափարախոսության և այլնի բարոյականության հիմքի մասին:

Չնայած բարոյականությունը չի ամրագրված որևէ կոնկրետ սոցիալական ինստիտուտի, այնուամենայնիվ, հասարակական կյանքի իրական գործոններից մեկն է: Այն իրեն զգացնել է տալիս կա՛մ պարտքի զգացումով, կա՛մ խղճի խայթով, կա՛մ ամոթի դրսևորմամբ, կա՛մ խոցված արժանապատվությամբ, որոնք մեզ զցում են խոր մտածումների և երբեմն նույնիսկ դժվարին իրավիճակների մեջ, պատճառում հուզական ապրումներ: Զարմանալի չէ, որ մարդու ինքնաճանաչման դեռ

---

[1] **Ламберг Э. Б.,** *Приверженность журналистскому долгу. Об этическом подходе в журналистской профессии, М., 2002, с. 126-127.*

ամենավաղ շրջանում բարոյականությունն իր վրա սևեռեց մարդկանց ուշադրությունը և ապա դարձավ նրանց ուսումնասիրությունների առարկան:

Ծագելով փիլիսոփայության ոլորտում և մնալով իմացական ուղղություններից մեկը՝ մեր օրերում էթիկան միացել է նաև սոցիոլոգիային և հոգեբանությանը: Ինչքան էլ տարբերվեն գիտնականների հետազոտություններն իրենց դիրքորոշումներով, բարոյական հարաբերությունները ներկայացնում են մի ամբողջականություն, որում դրսևորվում է անհատի վարքագծի փոխկապվածությունը հասարակության հետ: Այս ամբողջականության մեջ մտնում են անհատական և հասարակական գիտակցության, անհատի վարքագծի և հասարակական պրակտիկայի կապերը, վերջապես, գիտակցությունն ու վարքագիծը՝ որպես այդպիսին: Այստեղից հետևում է, որ էթիկական հետազոտություններում անխուսափելի են, փիլիսոփայությանը զուգահեռ, սոցիոլոգիական և հոգեբանական տեսանկյունները: Արդյունքում ժամանակակից էթիկան դառնում է դիսցիպլին, որը զարգանում է գիտությունների խաչմերուկում և ունի հետազոտական ընդարձակ դաշտ:

Արդի գիտության տեսակետից դրա մի կարևոր մասն է կազմում լրագրության և բարոյականության փոխառնչությունների հիմնահարցը: Լրագրության զարգացման ընթացքում փոփոխվում են այս երկուսի փոխհարաբերությունների ձևերը, չափն ու աստիճանը՝ կապված ամենից առաջ հասարակական գիտակցության ձևերի, այնուհետև՝ բուն լրագրական գործառույթի և սրա բարոյական նորմերի ու կողմնորոշումների փոփոխությունների հետ: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում են լրագրական բարոյականության մի քանի հիմնահարցեր, որոնք, կարծում ենք, կազմում են վերոհիշյալ փոխհարաբերությունների գործնական բովանդակության մի մասը:

Առաջին հայացքից լրագրության և բարոյականության շփումներն ունեն հետևյալ տեսքը.

– լրագրողական հասարակայնությունը, ի դեմս իր յուրաքանչյուր անդամի, բնական պատճառներով, հասարակությանն օգտակար վարքագծով բարոյական նորմեր կրող է, հետևաբար, անմիջականորեն ներառվում է հասարակության բարոյական հարաբերությունների մեջ՝ սուբյեկտի կարգավիճակով,

– լրագրողներն իրենց նյութերում պատմում են հասարակության բարքերի, բարոյական առաջընթացի և անկումների մասին, նշանակում է, հասարակական բարոյականությունը, բարոյական հարաբերությունները ժուռնալիստիկայի արտացոլման առարկան են,

– իրենց գործունեության ընթացքում նրանք ժողովրդականացնում են հասարակության բարոյական իդեալները, հաստատում նրա բարոյական արժեքների համակարգը և էթիկական երաշխիքները՝ օգնելով հասարակության բարոյական լուսավորությանը, որով լրագրությունը հանդես է գալիս բարոյականության գործիքի դերում,

– իրական երևույթների գնահատման ժամանակ լրագրողները՝ տեքստերի հեղինակները, որպես ելակետ, վերցնում են մարդկության բարոյականության փորձը՝ մեկնելով բարոյականության այն չափանիշներից, որոնք մշակել է

հասարակությունը, հետևաբար, լրագրության մեջ բարոյականությունը դիտվում և օգտագործվում է որպես մասնագիտական չափորոշման գործիք,

– բարոյականությանը չափազանց կապված լինելով՝ լրագրությունը հայտնվում է հասարակական օրգանիզմի ինքնակարգավորիչի դերում, սրանով հանդերձ, այն ներառված է նաև կառավարման համակարգում: Այս է պատճառը, որ հակասությունները, որոնք անխուսափելի են բարոյական հարաբերություններում (հասարակության ինքնակարգավորման միջոց) և պետահիրավական հարաբերություններում (կառավարման միջոց), անխուսափելիորեն հանդես են գալիս լրագրության մեջ՝ իր պարտականությունների հակասության տեսքով՝ առաջ բերելով կարգավորման մեխանիզմների անհրաժեշտություն, արդեն իր համակարգի ներսում և դրա մակարդակով: Այս պահանջին ի պատասխան՝ ձևավորվում է մասնագիտական էթիկան:

Ինչևէ, այսպիսին է պատճառներից մեկը, որը պայմանավորում է մասնագիտական էթիկայի անհրաժեշտությունը, չնայած այլ պատճառներ նույնպես կան, սակայն դրանք շոշափում են ավելի լայն շրջանակ՝ բացատրելով ոչ միայն լրագրության բարոյականության կամ էթիկայի առաջացման պատճառները, այլ նաև մասնագիտական բարոյականություն հասկացությունն ընդհանրապես:

Վերջին 15 տարիների ընթացքում, այլ կերպ ասած, այն ժամանակներից, երբ մեր երկրում հանդես եկավ անկախ լրագրությունը, էթիկական խնդիրները ստանում են ավելի ու ավելի սուր բնույթ: Մեր հասարակության մեջ արդեն հասցրել է ձևավորվել «դեղին մամուլի», «ծախու կամ վաճառվող լրագրողների» և, վերջապես, «գրչակի» բացասական կերպարը: Չեն պակասում հակասական իրավիճակները: Մի կողմից լրագրությունը համարվում է հեղինակավոր մասնագիտություն, մյուս կողմից նրա նկատմամբ պահպանվում է բացահայտ զգուշավոր վերաբերմունք, և ոչ միայն այն մարդկանց կողմից, ովքեր լրագրական հետաքրքրքրությունների օբյեկտ են: Սա մի տեսակ հիշեցնում է շփացած «աստղի» շուրջ ձևավորված բարդ փոխհարաբերությունները՝ նրան բոլորը սիրում են, սակայն շրջապատում են կասկածելի ու համառ բամբասանքներով:

Լրագրողների նկատմամբ բացասական վերաբերմունքը մեծ մասամբ ձևավորվում է կաղապարներով, որը ձևավորվել է որոշ լրագրողների, նաև որոշ մեկնաբանների «ջանքերով», որոնք փաստացի քամահրել են լրագրողի էթիկայի բոլոր նորմերը: Դրանցից ազատվելու կամ հաղթահարելու համար կարելի է առաջնորդվել այն չափանիշներով, որոնք մշակվել և ընդունվել են միջազգային լրագրական կազմակերպությունների կողմից: Դրանք շատ չեն:

Իր գործունեության ընթացքում լրագրողը շփվում է բազմաթիվ մարդկանց հետ, որոնք կամա թե ակամա, դառնում են մասնագիտական հետաքրքրությունների օբյեկտ: Բնականաբար, ամեն ինչ կախված է լրագրողի «մասնագիտացումից», այսինքն՝ այն թեմատիկայից, որի շրջանակներում նա աշխատում է: Այնուամենայնիվ, դրանք առավել քան լայն են, քանի որ տեղեկություններ հավաքելու համար լրագրողը ստիպված է լինում շփվել ամենատարբեր սոցալական

շերտերի ներկայացուցիչների հետ, որոնք տարբերվում են իրենց կրթական և հոգևոր մակարդակով:

Լրագրողական շփումները կարելի է բաժանել պաշտոնական և ոչ պաշտոնական տեսակի: Հասկանալի է, որ ճեպազրույցները, մամուլի ասուլիսները, շնորհանդեսները ենթադրում են պաշտոնական շփումների շրջանակ: Այս նույն սանդղակին են վերաբերում նաև հարցազրույցը պաշտոնատար անձի կամ անձանց հետ՝ մամուլի քարտուղարից մինչև երկրի նախագահը: Բնականաբար, պաշտոնական շփումները ենթադրում են ժամանակային որոշ սահմանափակում, երբեմն նույնիսկ ծայրահեղորեն սուղ: Օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում պաշտոնական հանդիպումների ժամանակ (որը թերևս միակ տեղն է, ուր կարելի է որևէ մեկից հարցազրույց վերցնել) գոյություն ունեն նույնիսկ արձանագրային հրստակ նշումներ՝ պետք է այստեղ կանգնել, այստեղից է պետք նկարահանել ղեկավարի մուտքը, միայն այստեղ կարելի է ձեռքսեղմումով բարևել և այլն[2]: Սա, իհարկե, թեկուզ և բծախնդիր, բայց և ավանդութային հիմքերով սնուցվող պաշտոնական արարողակարգ է: Ժողովրդավարական լիարժեք երկրներում ամեն ինչ ավելի պարզ է, և սահմանափակումները վերաբերում են միայն հարցադրումների կարգին, չնայած «մամուլի համար տեղ» հասկացությունը գոյություն ունի ամենուր:

Ոչ պաշտոնական շփումներում, ինչ խոսք, ամեն ինչ անհամեմատ դյուրին է: Սրանք կարող են նույնիսկ ինքնաբուխ լինել: Սակայն թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում լրագրողի հարաբերությունն անհատի հետ պետք է համապատասխանի ինչպես միջազգային, այնպես էլ տեղական էթիկական կոդեքսի պահանջներին:

Լրագրողը պետք է հարգի այն մարդկանց պատիվն ու արժանապատվությունը, ովքեր դառնում են իր մասնագիտական ուշադրության առարկան: Նրանց հետ շփումներում լրագրողը պետք է լինի նրբանկատ, խուսափի նրանց անձնական կյանք ներխուժելուց և բացառի նման տեղեկության հրապարակումը, չհաշված այն դեպքերը, որոնք անհրաժեշտ են հասարակության շահերը, իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու համար:

Լրագրողի շփումը տեղեկատվության աղբյուրի հետ կարգավորվում են հետևյալ նորմերով. առաջնային խնդիրը պետք է լինի հասարակությանը ապահովելը ճիշտ և հավաստի տեղեկատվությամբ՝ իրականությունն ազնվորեն և անկողմնակալ ներկայացնելու գործընթացում: Փաստերը շարադրվում են բարեխղճորեն՝ պահպանելով դրանց իրական իմաստը, բացահայտելով կարևորագույն կապերը և թույլ չտալով աղավաղումներ: Լրագրողն առավելագույնս օգտագործում է իր ստեղծագործական կարողություններն այն բանի համար, որ հասարակությունը ստանա բավական նյութ՝ ձևավորելու սեփական, ճշգրիտ և փոխկապակցված պատկերացումներն աշխարհի մասին: Այնպես որ խնդրի ծագումը, բնույթը և էությունը, ընթացքն ու ուղղությունը հնարավորինս պարզ լինեն:

Լրագրողական տեղեկատվությունն ընկալվում է որպես հասարակական բարեկեցություն, այլ ոչ թե սպառման առարկա: Սա նշանակում է, որ լրագրողը պատասխանատվություն է կրում իր հաղորդած տեղեկատվության համար: Նա

---

[2] *Энциклопедия жизни современной российской журналистики, М., 1997, т. 1, с. 55-64.*

պատասխանատու է ոչ միայն նրանց առաջ, ովքեր վերահսկում են ԶԼՄ-ները, այլ առաջին հերթին, լայն հասարակության առաջ՝ հաշվի առնելով սոցիալական բազմապիսի շահերը: Լրագրողի սոցիալական պատասխանատվությունը պահանջում է, որպեսզի նա բոլոր իրավիճակներում գործի բարոյական համոզմունքով:

Լրագրողի մասնագիտության բնույթը պահանջում է, որ նա նպաստի տեղեկատվության համընդհանուր հասանելիությանն ու հասարակության մասնակցությանը զանգվածային լրատվամիջոցների աշխատանքին: Սա ենթադրում է սխալների ուղղման պարտավորվածություն և պատասխանի հնարավորության ապահովում:

Մասնագիտական նորմերը, որոնք նաև մասնագիտական էթիկայի միջազգային սկզբունքներ են, մղում են հարգելու հասարակության շահերը, նրա ժողովրդավարական ինստիտուտները և հասարակական բարոյականությունը: Սրանցից բացի, գոյություն ունեն նաև օրենքներ, որոնց թվում և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, որում մասնակիորեն ասված է. «Հեռուստածրագրերում հրաժարվել չափազանց դաժանություն կամ բռնարարքներ ցուցադրելուց կամ նկարագրելուց»[3]:

«Չափազանց դաժանություն կամ բռնարարքներ ցուցադրելուց կամ նկարագրելուց» խուսափելու տակ հասկանում ենք ավելորդ նատուրալիզմը, մարդկանց կամ կենդանիների սպանությունները չարդարացված մանրամասներով վերարտադրելը, մարդկանց կամ կենդանիների նկատմամբ բռնարարքների և ծաղրի պատկերումը՝ ֆիզիկական կտտանքների կիրառմամբ, ինչպես նաև հանցագործությունների, աղետների հետևանքները՝ դիակների, վերքերի, կտտանքներից մնացած և գոյացած հետքերի և այլնի ցնցող կադրերի ու տեսարանների ցուցադրումը:

Լրագրողը պետք է հրաժարվի բժշկության ոլորտին վերաբերող այն հայտնագործությունները ցուցադրելուց կամ հեռարձակելուց, որոնք կարող են մարդկանց մեջ ծնել չարդարացված վախ կամ հույսեր:

Այս ամենից բացի, լրագրողը պետք է պահպանի մայրենի լեզվի անաղարտությունն ու ստուգությունը, հատկապես հեռուստառադիոեթերում: Նա պետք է հրաժարվի բառապաշարի չարդարացված, պարզունակ նմանակումներից, բարբառային և ժարգոնային բառապաշարի կիրառությունից: Ավելորդ է ասել, որ հատկապես հենց այս սկզբունքն է առավել չիրականացվածը, չպահպանվածը: Այս գեղեցիկ ձևակերպումներն ուղղակի ծիծաղելի են հնչում, երբ հետևում ենք հայրենական հեռուստառադիոալիքների աշխատանքային, գովազդային հոլովակներին: Ցավոք, հեռուստատեսությունը չափազանց մեծ ազդեցություն է թողնում հասարակական ճաշակի վրա, ինչը ակնհայտորեն հետագա պարզունակության միտում ունի: Առաջին հերթին խոսքը վերաբերում է այսպես կոչված «երիտասարդական» հաղորդումներին, իսկ ռադիոյի մասին խոսելն իսկ ավելորդ է. այսպես կոչված ուղիղ եթերները շատ քիչ տեղ են թողնում «մայրենի լեզվի անաղարտության պահպանման» համար:

[3] Հեռուստատեսության և ռադիոյի մասին ՀՀ օրենք (28.II.2001թ.), հոդված 24, կետ Է:

Ամենախոցելին այս բնագավառում մնում է վերը հիշված՝ «հասարակությանը ապահովել ճիշտ և հավաստի տեղեկատվությամբ» նորմը: Սա հատկապես վերաբերում է քաղաքականությանը: Ինչպես ցույց են տալիս 1996 և 2003 թթ. Նախագահական ընտրությունների արդյունքները, մամուլը հիմնականում ներկայացնում և աջակցում էր, ավելի շուտ «գովազդում» էր միայն մեկ թեկնածուի՝ լիովին քամահրելով մյուսներին: Նմանատիպ օրինակները, ցավոք, շատ են: Առավել համոզված կարելի է ասել, որ այս ամենն արվում է գիտակցաբար, և պետք է նշել, որ դրան դրդող պատճառները կարող են տարբեր լինել՝ շահը, անձնական քաղաքական դիրքորոշումը, անձնական հակակրանքը և այլն: Սակայն նման դեպքերում մենք գործ ունենք մասնագիտական էթիկայի խախտման դեպքերի հետ: Պակասում է հավասարակշռվածությունը կամ բազմակարծությունը:

Լրագրողի հարաբերությունները տեղեկատվության աղբյուրի հետ առաջին հերթին ենթադրում է բարեխղճություն, փաստերի մանրակրկիտ և բծախնդիր ստուգում, տեղեկությունների ճիշտ և հստակ շարադրում, հրապարակման ենթակա փաստաթղթերից կամ այլ աղբյուրներից ստացված տեղեկատվության առանձնացում: Այս ամենը ենթադրում է նախ տեղեկատվության տարածում և մեկնաբանում, որի հավաստիությանը լրագրողը համոզված է, և որի աղբյուրը նրան քաջ հայտնի է: Նա իր բոլոր ջանքերը ներդնում է, որպեսզի խուսափի որևէ մեկին վնասելուց, իր նյութի անլիարժեքության կամ անճշտության հետևանքով հասարակականորեն նշանակալի երևույթները միտումնավոր թաքցնելուց կամ էլ նախապես հայտնի կեղծ տեղեկատվություն տարածելուց: Այնուհետև լրագրողն իր հաղորդումներում հստակ սահմանազատում է փաստը կարծիքից, մեկնաբանություններից կամ կանխատեսումներից: Միևնույն ժամանակ իր մասնագիտական գործունեության ընթացքում նա պարտավոր է իրեն չեզոք դրսևորելու (թեև այս դրույթը վիճելի է):

Մասնագիտական պարտականությունները կատարելիս լրագրողը տեղեկատվություն չպետք է ստանա անօրինական կամ էլ բարոյապես անթույլատրելի միջոցներով: Նա հարգում է ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքները՝ հատկապես տեղեկատվություն չտրամադրելու նրանց իրավունքը կամ էլ չպատասխանելու լրագրողի տված հարցերին, բացառությամբ այն դեպքերի, որոնք պարտավորեցվում են օրենքով:

Տեղեկատվության աղբյուրի նկատմամբ գաղտնիության խոստման դեպքում հարկ է պահել մասնագիտական գաղտնիքը: Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու լրագրողին՝ բացահայտելու տեղեկատվության աղբյուրը: Գաղտնիության սկզբունքը կարելի է խախտել միայն բացառիկ դեպքերում, երբ, օրինակ, կասկած կա, որ աղբյուրը միտումնավոր խեղել է փաստերը, իրականությունը, և երբ միայն աղբյուրի անվան հիշատակումով կարելի կլինի խուսափել մարդկանց համար ծանր կորուստներից:

Այնուհետև անհրաժեշտ է հրաժարվել երրորդ մեկից ստացված նյութերից, որոնք ձեռք բերելու համար օգտագործվել են թաքնված տեսախցիկներ, ձայնագրություններ, լուսանկարներ, հեռախոսազրույցների թաքուն լսումներ, եթե նման

ճանապարհով ձեռք բերված նյութերի դեպքում դրանք տրամադրողը չի ներկայացնում այդպիսի տեղեկատվության օրինականությունը հաստատող փաստեր, փաստաթղթեր, մասնավորապես դատական որոշում:

Նույն կերպ թույլատրելի չէ տեղեկատվության ձեռքբերումը խաբեության ճանապարհով, ինչպես նաև վախեցնելու կամ կաշառելու միջոցով: Այս կերպ ստացված տեղեկատվությունը արդեն սովորական երևույթ է և վաղուց մերժելի:

Լրագրական էթիկայի հիմնական սկզբունքներից է այն, որ լրագրողն իրավունք չունի հանդես գալու ուրիշի անունից[4]:

Իսկ ինչպես վարվել այն դեպքերում, երբ ժուռնալիստն ուղղակի չի կարող նյութը պատրաստել առանց «մասնագիտությունը փոխելու», այսինքն՝ իրեն ուրիշի տեղ ներկայացնելու: Նման դեպքերում ժուռնալիստը ստիպված կանգնում է ընտրության առաջ. փոքր-ինչ անցնել օրենքի սահմանը, փոխարենը պատրաստել ցնցող մի նյո՞ւթ, թե՞ պահպանել մասնագիտական էթիկան և մնալ ընդամենը մամուլին կամավոր տրամադրված նյութերի հույսին, որոնք հաճախ հենց նպատակ են հետապնդում «կողմնակի մարդկանցից» կոծկել «ավելորդ» տեղեկատվությունը: Կարելի է կարծել, որ այստեղ ժուռնալիստը, թեկուզ և թեթև մեղանչումներով, պետք է հարգի քրեական օրենսգիրքը, այդ թվում՝ օտարերկրյա, որքան էլ այդ երկիրը գայթակղի իր էկզոտիկայով:

Լրագրողների նկատմամբ ոչ քիչ զայրույթ ունեն նաև հրապարակումների կամ հեռուստահաղորդումների «գործող անձինք»: Անունների, ազգանունների ոչ ճիշտ գրառումներն ու նշումները միայն ամենափոքր մեղքերն են: Սակայն էթիկայի առավել ծանր խախտումներից են անձին վարկաբեկող հրապարակումները, որոնք, նույնիսկ հավաստի լինելով, կարող են թունավորել ոչ միայն նրա, այլ նաև նրա հարազատների ու մոտ շրջապատի կյանքը: Սրա համար էլ մեծ մասամբ քրեական բնույթի ռեպորտաժների և ակնարկների «հերոսները» ներկայանում են հորինված անուններով (կամ հորինածո սկզբնատառերով): Հատկապես զգուշավոր պետք է լուսաբանել այն դրվագները, որոնց նկատմամբ դեռ չի հնչել դատարանի կամ հանձնաժողովի վճիռը: Սա այն հանգույցներից մեկն է, երբ լրագրական էթիկան աղերսվում է իրավունքին. եթե դեռևս դատավճիռ չկա, ուրեմն զերծ պետք է մնալ անմեղության կանխավարկածը ոտնահարելուց: Մյուս կողմից, այստեղ արդեն խնդիրը միայն «հերոսի» հեղինակությունը չէ, այլ կոնկրետ հասարակական կարծիքի ձևավորման մեջ է, հատկապես փոքր քաղաքներում և գյուղերում, ուր մեծ է «կորպորատիվ ոգին»: Հայտնի են դեպքեր, երբ «հրապարակման զոհերը» զրկվել են ոչ միայն աշխատանքից, այլև հայտնվել են ողբերգական իրավիճակում: Իր հրապարակումներում լրագրողը պետք է խուսափի նրա հարազատներին և շրջապատի մարդկանց անվանական նշելուց՝ անունները տալուց, որոնք մեղադրված են եղել կատարված հանցագործության մեջ: Այս է պատճառը, որ լրագրության, ինչպես և բժշկության մեջ պետք է առաջնային լինի «մի՛ վնասիր» սկզբունքը: Այն ենթադրում է, ամենից առաջ, մարդկանց պատիվն ու արժանապատվությունը հարգելու զգացումն ու օրինապահությունը: Լավագույնս է ձեռքն-

[4] **Лазутина Г. В.,** *Профессиональная этика журналиста, М., 2000, с. 86.*

պահ մնալ բոլոր տեսակի անզգույշ ակնարկներից կամ մեկնաբանություններից, որոնք առնչվում են անհատի ֆիզիկական թերություններին կամ հիվանդություններին: Նաև ձեռնպահ մնալը նման տեղեկությունների հրապարակումներից, բացառությամբ այն դեպքերի, որոնք ուղիղ կապ ունեն հրապարկվող նյութի բովանդակության հետ: Լրագրողը պետք է զերծ մնա վիրավորական արտահայտություններ գործածելուց:

Լրագրողը ձեռնպահ է մնում հանցագործության զոհի անունը հիշատակելուց կամ էլ այնպիսի նյութերի պատրաստումից, որը հասցնում է զոհի անձի բացահայտմանը: Հատուկ խստությամբ և զգուշավորությամբ են կառուցվում նյութերը կամ լուսաբանվում իրադարձությունը, եթե դրանք առնչվում են անչափահասների խնդիրներին:

Միայն հասարակության շահերի պաշտպանությունը կարող է արդարացնել լրագրողական այն հետաքննությունը, որը ենթադրում է ներխուժում մարդու անձնական կյանք: Հասկանալի է, խոսքը չի վերաբերում այսպես կոչված «պապարացիներին», որոնք իրենց ծայրահեղ վարքագծով ու լկտիությամբ կարող են հրահրել արևմտյան բարեկեցությունից ընդարմացած մարդկանց գրգիռները: Նման սահմանափակումները խստորեն պահպանվում են նաև այնպիսի դեպքերում, երբ այդ մարդիկ ներգրավված են բժշկական կամ նման հաստատություններում:

Չի թույլատրվում առանց համաձայնության հավաքել, պահպանել և տարածել անձնական կյանքին վերաբերող տեղեկատվություն՝ առանց տվյալ անձի համաձայնության: Անձնական կյանք հասկացությունը ներառում է հետևյալը. Անձնական և ընտանեկան գաղտնիքները, այդ թվում՝ ամուսնական և մտերմիկ հարաբերությունները, սեռական կողմնորոշումը, կրոնական հակումները, ընկերական հարաբերությունները, ժամանցի անցկացման մանրամասները, նամակագրության գաղտնիքը, հեռախոսազրույցները, փոստային, հեռագրային, համակարգչային և այլ հաղորդագրությունները:

Նմանատիպ խախտումներից խուսափելու միակ ուղին հեռուստաթերում կամ մամուլում լրագրողի էթիկան ոտնահարող հրապարակումների արգելումն է: Խախտել, թե չխախտել այս կանոնները, ի վերջո, յուրաքանչյուր լրագրողի ներքին գործն է, ինչպես նաև որպես մասնագետի և մարդու խղճի գործը: Սակայն ամբողջ պատասխանատվությունն ընկնում է այսպիսի տեղեկատվությունը տարածողների՝ թերթերի, ռադիոյի, հեռուստաընկերությունների վրա: Եվ եթե նրանք հավատարիմ մնան իրենց պարտքին, ապա որևէ լրագրող դժվար թե երբևէ անդրադառնա նման թեմաների, քանզի չի լինի դրանք իրացնելու հնարավորությունը:

Այժմ դիտարկենք այն նորմերը, որոնք որոշում են այսպես կոչված «կորպորատիվ էթիկան»[5], այսինքն՝ հարաբերությունները գործընկերների և մրցակիցների հետ: Պետք է խոստովանել, որ որևէ ստեղծագործական կոլեկտիվում անխուսափելիորեն ի հայտ է գալիս մրցակցության ոգին: Իհարկե, յուրաքանչյուր լրագրող ձգտում է ինքնահաստատման, ինքնակատարելագործման: Իր ստեղծա-

[5] **Ламберг Э. Б.,** նշվ. աշխ., էջ 134-136:

գործական ուղու հենց սկզբից նա իր առջև տեսնում է մրցակիցների և իհարկե նրանց, ում կուզենար հավասարվել: Պետք է խոստովանել, որ ստեղծագործական կոլեկտիվում բախումներն ուղղակի անխուսափելի են, և որպեսզի դրանք չվերաճեն «ձեռնամարտի», առաջ եկավ լրագրության մեջ կորպորատիվ կուլտուրայի կանոնների մշակման անհրաժեշտությունը:

Լրագրողի մասնագիտական ազնվությունը ենթադրում է նրա իրավունքը՝ հրաժարվելու այն աշխատանքից, որը հակասում է իր համոզմունքներին: Մասնագիտական ազնվությունը թույլ չի տալիս պաշտպանել այնպիսի մասնավոր շահեր, որոնք հակադրվում են ընդհանուր բարեկեցությանը: Նշված էթիկական սկզբունքների մեջ են մտնում ինտելեկտուալ սեփականության նկատմամբ հարգանքը, մասնավորապես՝ գրագողություն բացառումը:

Եթե հրատարակության կամ խմբագրության ղեկավարության պահանջները հակասում են հասարակական բարոյականությանը, ապա լրագրողը պետք է հրաժարվի դրանք բավարարելուց: Նա կարող է հրաժարվել հանձնարարությունից, եթե այն հակասում է իր բարոյական համոզմունքներին: Նույն կերպ նա պետք է հոգ տանի իր մասնագիտության հեղինակությունը, պատիվը բարձր պահելուն, հարգի իր գործընկերների պատիվն ու արժանապատվությունը, չդիմի դրանք կասկածելի դարձնող գործողությունների: Ստեղծագործական գործունեության ընթացքում լրագրողն իրեն թույլ չի տա չարաշահել իր գործընկերների վստահությունը, խանգարել նրանց կատարելու մասնագիտական պարտականությունները, վնասել նրանց որևէ այլ կերպ: Նա օժանդակում է իր գործընկերներին նրանց ստեղծագործական աշխատանքում, գիտելիքների և իմացության կատարելագործման գործում, օգնում է նրանց, երբ հայտնվում են դժվար կացության մեջ: Մասնագիտական ազնվությունը չի կարող թույլ տալ արդարացնելու արդարության կամ ճշմարտության դեմ ոտնձգությունը:

Ճիշտ է, բավական դժվար է սկզբունքային մնալ այնպիսի պայմաններում, երբ մամուլը, բառացիորեն, «գնված է»: Շատ դժվար է պատկերացնել իր սկզբունքներին հավատարիմ մնացած հաստիքային աշխատող մի լրագրողի, որը կարողանա հրապարակել իր կարծիքն արտահայտող, սակայն խմբագրի և հրատարակչի համոզմունքներին կամ էլ հրատարակության քաղաքականությանը հակադրվող գոնե մի հոդված: Ավելի շուտ նման հոդվածը երբեք լույս չի տեսնի, իսկ լրագրողը հաստիքային աշխատողից կվերածվի անորոշ ապագայով անգործի: Ինչ վերաբերում է գրագողությանը, ապա վերջերս տարածվել է «բաց աղբյուրից օգտվելու» միտումը, այլ խոսքով՝ ինտերնետից օգտվելը: Չգիտես ինչու, շատ հեռուստաընկերությունների լրագրողներն ու խմբագիրները մոռանում են, որ համաշխարհային ինտերնետային ցանցի բոլոր տեքստերն էլ ունեն իրենց հեղինակները, և որ դրանցից օգտվելիս նույնպես պետք է ունենալ հեղինակի թույլտվությունը կամ գոնե նշել աղբյուրը:

Որոշ տեսակետների համաձայն՝ կարելի է էական առարկություններ անել վերը թվարկված հիմնական դրույթներին: Ունիվերսալ էթիկական եսամոլությունը, օրինակ, ենթադրում է, որ բոլոր մարդիկ պետք է առաջնորդվեն անձնական

շահերով ու հետաքրքրություններով[6]: Սա բավական տխուր զարգացումներ է խոստանում նորությունների թողարկումների և բաժինների, ինչպես նաև այն հասարակության համար, որում անհրաժեշտ է գտնել միջոցներ՝ հարթելու անհամաձայնություններն ու տարաձայնությունները, որոնց հիմքում ընկած են սեփական շահերից բխող նախասիրությունները:

Որպես գործառութային էթիկա՝ ունիվերսալ եսամոլությունը կարող էր ավելի իրական լինել այնպիսի հասարակության մեջ, ուր անհատներն ու խմբերը հիմնականում անկախ և ինքնուրույն են: Ժամանակակից կազմակերպություններում, որոնք պահանջում են սերտ համագործակցություն և փոխադարձ կախվածության մեջ են, այն բավական լուրջ կասկածներ է առաջացնում: Արդի աշխարհում շահերը հաճախ բախվում են իրար, և էթիկական եսամոլությունը չի կարող օգնել լուծելու այսպիսի տարաձայնություններ՝ սեփական համոզմունքներին հավատարիմ մնալով հանդերձ:

Գոյություն ունեն նաև եսամոլության այլ ձևեր, և դրանք դժվար թե ավելի քիչ անհանգստություն պատճառեն: Այսպես կոչված «անհատական եսամոլությունը»[7] հաստատում է, որ յուրաքանչյուր առանձին մարդ պետք է առաջնորդվի սեփական՝ անհատական շահերով ու հետաքրքրություններով: Նման մոտեցումը դժվար թե եղբայրության, ընկերության կամ էլ մարդկանց հանդեպ պարզ սիրալիրության համապատասխան բանաձև լինի: Այս վերը հիշատակված ձևը, որը հաշվի չի առնում ուրիշների դեմ ուղղված հավանական հետևանքները, թվում է «նարցիսիզմի կուլտուրայի» հարմար բանաձև, ինչպես որակում է Ք. Լաշը[8]: Դժվար է պատկերացնել, թե ինչպես լրագրողը, որը պարտավոր է ծառայել հասարակությանը, կարող է հետևել նման էթիկայի և բարոյականության:

Եվ, վերջապես, գոյություն ունի նաև «գիտական եսամոլություն», հավատն այն բանի, որ մարդիկ ինչ էլ մտածեն կամ ասեն իրենց համոզմունքների մասին, նրանք մշտապես կամ գրեթե մշտապես առաջնորդվում են սեփական շահերով ու հետաքրքրություններով: Եթե ասելիքն ավելի խիստ ձևակերպենք, սա ընդհանրապես բարոյական տեսություն չէ, այլ հոգեբանական զգուշավորությունն այն բանի, որը գոյություն ունի իրականում, կամ էլ ենթադրվում է, որ գոյություն ունի: Բարոյական փիլիսոփայությունը ենթադրում է դրա սահմանումը, որակումը: Եսամոլության այս ձևին հարողների համար դժվար կլինի համոզիչ ներկայացնել իրենց ճշմարտացիությունը: Նրանք չեն կարող ներթափանցել բացահայտ այլասերի գլխի մեջ, որպեսզի քննարկեն այն կամ էլ դրա անշահախնդիր տարբերակները: Նրանք չեն կարող ապացուցել, որ հանցագործ աշխարհի գործունեությունը հետաքննող լրագրողը, որն այդ պատճառով սպանվել է, գործել է իր շահերից ելնելով՝ զբաղվելով իր վտանգավոր արհեստով:

---

[6] **Green B.,** *Janet's World, Washington Post, April 19, 1981, p. 1.*

[7] **Ламберг Э. Б.,** նշվ. աշխ., էջ 137-138:

[8] Նույն տեղում, էջ 156:

Օգտապաշտությունը[9] նույնպես ցուցադրում է իր խոցելիությունը: Մի՞թե մարդը կարող է հստակ իմանալ, որ ինչ-որ որոշում կարող է հանգեցնել համընդհանուր բարեկեցության:

Օգտապաշտությանը հետևելիս դեմ ենք առնում էթիկական կարգի երկու դժվարության: Առաջինը՝ ինչպես կանխատեսել հետևանքները, երկրորդը՝ կայանում է բոլորի համար առավելագույն բարիք ստեղծելու արարքի ընտրության հարցը: Արարքի օգտապաշտը կարծում է, որ հնարավոր չէ գտնել մեկ միասնական կանոն, որով հնարավոր կլիներ բավարար չափով առաջնորդվել բարոյական որոշումներ կայացնելիս: Նա կարծում է, որ պետք է ջանախնդրորեն ընտրել այն միակ արարքը, որը կբերի առավել օգուտ, քան մյուսները տվյալ պահին և հետագայում: Լրագրողներին, որոնց վրա ճնշում է գործադրվում նյութը ժամանակին հանձնելու համար, արարքի օգտապաշտական դիրքորոշումը կարող է բարենպաստ չլինել:

Կանոնի օգտապաշտները[10] կարող են առարկել, որ իրենց գրչեղբայրների համար իրենք ունեն լավ առաջարկ՝ «գործի՛ր առաջնորդվելով» կանոնով, որը բերում է առավելագույն բարեկեցություն և տնտեսում է ժամանակը, ինչը նրանց համար առանց այն էլ միշտ սուղ է: Բայց հնարավո՞ր է, արդյոք, գտնել այնպիսի կանոն կամ կանոններ, որոնք բոլոր դեպքերում կհասցնեն առավելագույն բարեկեցության: Դիտարկենք առավելագույնը՝ լրագրողները պետք է միշտ ասեն ճիշտը: Եթե սա ընկալենք բառացի, ինչպես և պետք է հասկանալ «միայն ճշմարտությունը» արտահայտությունը, ապա լրագրողները պետք է մերժեն ոստիկաններին այն ժամանակ, երբ նրանք սպանության բացահայտման գործի ընթացքում լրագրողին հայտնում են ասենք այն մասին, որ իրենց հաջողվել է գտնել հանցագործի մատնահետքերը, և անմիջապես էլ խնդրում, որ այդ մասին պետք չէ հիշատակել ռեպորտաժում: Այս դեպքում հրապարակումը (որ մատնահետքերը գտնված են) կարող է հանցագործին հուշել փախուստի գաղափարը, ինչով էլ կխոչընդոտվի նրա ձերբակալումը: Որպես փոխարինող տարբերակ՝ կարելի էր ստեղծել պայմանական կանոն, որը կհավաստեր, որ լրագրողները միշտ պետք է ասեն ողջ ճշմարտությունը, բացառությամբ այն դեպքերի, որոնք կարող են սպառնալ մարդու անվտանգությանը: Ակնհայտ է, սակայն, որ «հայտնիր ողջ ճշմարտությունը, բացառությամբ այն դեպքերի, որոնք կարող են սպառնալ մարդկանց կյանքին» կանոնի պայմանները գործող լրագրողների համար առաջացնում են բավական լուրջ բարդություններ: Կռահել, թե ինչը կարող է առաջացնել կյանքի համար վտանգ, ինքնուրույն կամ առաջնորդվելով կանոնով, բավական ռիսկային է լրագրողների համար, որոնք ցանկանում են հավատարիմ մնալ արդարությունը հայտնելու սկզբունքին և առողջ երկխոսությանը:

Մինչ օգտապաշտության թեման թողնելը անհրաժեշտ է մի քանի խոսք ասել այն խնդիրների մասին, որոնք կանգնած են լրագրողների առաջ, ինչը ենթադրում է առավելագույն համընդհանուր բարեկեցության սկզբունքի կիրառումը: Ստանձնել նման պատասխանատվություն՝

[9] Նույն տեղում, էջ 161:
[10] Նույն տեղում, էջ 164:

նշանակում է լրագրական և խմբագրական գործունեության հետևանքների մշտապես ճիշտ գնահատման պատասխանատվության տակ մտնել: Բարոյական լրագրողները, իհարկե, պետք է մշտապես խորհեն իրենց արարքների հետևանքների մասին, որպեսզի խուսափեն զրպարտանքի կամ ուրիշի անձնական կյանք ներխուժելու մեղադրանքներով դատական գործընթացներից: Այնուամենայնիվ, օգտապաշտության ոգին պահանջում է մտածել և կանխատեսել հետևանքներն այնպիսի ճշգրտությամբ, որին լրագրողների մեծ մասն ուղղակի ունակ չէ: Ավելին, ճշմարտության փնտրտուքների ժամանակ նրանք կարող են սայթաքել նույնիսկ հարթ տարածքում, եթե իրենց թույլ տան չափազանց անհանգստանալ հետևանքների և սեփական աշխատանքի դրական արդյունքների համար: Այդ մտահոգությունը կարող է խանգարել փաստերի հավաքմանը: Բացի այդ, սա կարող է ստիպել լրագրողներին բռնել մեծամասնության կողմը՝ ի վնաս փոքրամասնության, կարող է հակասել անկողմնակալ և անշահախնդիր գործունեությանը:

Իրականում կարելի է հաստատել, որ գոյություն չունի բարոյական նորմերի այնպիսի համակարգ, որում դիտարկված չլինեն հետևանքները, թեկուզ կողմնակիորեն: Էթիկայի տասը պատվիրաններն ու այլ ուղեկցող աստղերը երկրային չէին դառնա, եթե չառնչվեին մարդկային կյանքին: Արգելքը գայթակղության նկատմամբ՝ զգուշավորություն է ստի, խաբեության նկատմամբ, ինչպես նաև արգելող նորմ, որը կոչված է նպաստելու ընտանիքների և հասարակության համաձայնությանը: Նշենք դեոնթոլոգիայի՝ պարտքի և բարոյական պահանջմունքների վերաբերյալ պատկերացման ևս մեկ խոցելի պահ՝ ի՞նչ է պատահում, երբ բարոյական սկզբունքները սկսում են բախվել: Ինչպե՞ս պետք է վարվեն արդարությանը նվիրված լրագրողները, երբ նրանց խնդրում են խախտել տեղեկատվության գաղտնիությունը: Բարոյական նորմերից որի՞ն տալ նախապատվություն: Մեկ կանոնի կիրառության հետևանքներն այնքան լուրջ պետք է լինեն, որ չխախտվի մյուս կանոնը:

К ВОПРОСУ О ЖУРНАЛИСТСКОЙ ЭТИКЕ

НАЛБАНДЯН Н. М.

Резюме

Взаимоотношения журналистики и морали связаны не только с формами общественного сознания, но и с функциями журналистики и реализацией их нравственных норм и ориентиров. В частности, противоречия между нравственными и правовыми отношениями, выявляемые в журналистике, обуславливают необходимость механизмов урегулирования. В соответствии с этим формируется профессиональная этика, а в условиях независимой журналистики связанные с ней вопросы еще более заостряются.